

ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի ուղերձը

Ընտանիքի միջազգային օրվա առթիվ

Սիրելի հայրենակիցներ,

Միջազգային հանրությունն այսօր՝ մայիսի 15-ին նշում է Ընտանիքի օրը: Լինելով ընդհանրական տոն, այն յուրահատուկ է ընկալվում տարբեր ազգերի մոտ: Հայ ժողովրդի համար Ընտանիքի օրը առանձնահատուկ իմաստ է խորհուրդ ունի: Եվ դա պատահական չէ: Բոլոր ժամանակներում ընտանիքը հայ մարդու համար եղել է սրբություն՝ սրբոց: Օջախի ծուխը վառ պահելը, ընտանիքի բարեկեցությունն ու ապահովությունը արժանապատվության խնդիր է եղել, կա ու կլինի:

Ամուր ընտանիքը ամուր է անսասան պետության հիմքն է: Ընտանեկան երջանկությամբ է պայմանավորված առողջ հասարակությունը: Այդ ամենի գիտակցմամբ՝ մեր ընտանիքներում ձևավորվում է մարդը որպես քաղաքացի: Ընտանիքը սիրո, հարգանքի եւ հասարակական համերաշխության աղբյուր է, ու այդ սկզբունքների վրա է հիմնվում յուրաքանչյուր քաղաքակիրթ հասարակություն:

Շնորհավորում եմ բոլորիս՝ Ընտանիքի միջազգային օրվա կապակցությամբ: Մաղթում եմ առողջ, երջանիկ ընտանիքներ: Թող որ բոլոր ընտանիքներում թեւածեն մանկան ճիչը, ուրախությունն ու ժպիտը: Խաղաղություն մեր ընտանիքներին, մեր ժողովրդին: